



Քիչսպրե՛ծ - Կոսթա

# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28844  
Փետրուար 8, 1972

Արժանաշնորհ  
Տ. Բաբգէն Ա. Զհնյ. Մագսուտեան  
Հովիւ Ս. Յորորդուծիւն Եկեղեցւոյ  
եւ Սախազայ Ժիական Խորհուրդի  
Քէյմպրիժ.

Սիրելի Տէր Բաբգէն,

Ստացած ենք 1972 Փետրուար 8 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը  
հաղորդէք թէ 2եր նախազանութեամբ՝ Յունուար 30ին գումարուած 2եր  
Ժիական Ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի երեք անդամոց  
ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք  
ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր Ժիական Ժողովը տեղի ունեցած է թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք  
Ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել Ժիական Խորհուրդի նորընտիր  
Դիւանի, ընտրուած թեմական պատգամաւորներու եւ եկեղեցւոյդ ենթակայ  
մարմիններու ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի վը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ  
մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Տիարք՝ Արտաշէս Տէր Անանեան  
Կրէկըրի Քաշմեան  
Ալպրթ Քալանեան